

ւելուած հայ համայնքի կանոնադրութեան, եւ 1844 Գեկտեմբեր 20-ին վաւերացուելով իշխանէն՝ դարձաւ պետական օրէնք: Այս կերպով հայ համայնքը վաւերացուեցաւ իբր պաշտօնական հաստատութիւն, ինչ որ առաջին քայլը կազմեց դէպի ստացումը քաղաքացիական իրաւունքներու, որու մասին երկար խօսած ենք նախընթաց գլուխի մը մէջ:

\* \* \*

Ինչպէս բոլոր, Մոլտավիոյ իշխան Մի-հայել Սթուրզայի Նոյեմբեր 8, (1841) թուակիր մէկ հրովարտակը կը վաւերացնէ դպրոցին կանոնադիրը (Colectia Documentelor atingatoare de Comunitatea Armeana in principatul Moldovei de la 1841—1852):

Այս կանոնադրութիւնը կը բաղկանայ ութը կէտերէ, որոնց համաձայն հայ համայնքին դպրոցները կը մտնէին Մոլտավիոյ Հանրային կրթութեան շրջանակին մէջ եւ ենթակայ էին պետական հոգաբարձութեան (Epitropia): Այդ դպրոցները պիտի առաջնորդուէին հայ համայնքին դաւանանքին վարդապետութիւններէն եւ երկրին բարոյական ու քաղաքական սկզբունքներէն: Տնօրէնը պիտի ընտրուէր հայ թաղականութենէն՝ պետական հոգաբարձութենէն վաւերացուելու պայմանով: Ամէն տարեվերջի պետական հոգաբարձութիւնը պիտի հսկակշռէր դպրոցին եկամուտներն ու ծախքերը:

Առաջին անգամ է որ պետական հակակշռութիւնը կը մտնէին Մոլտավիոյ հայ դպրոցները, որոնք ինքնավար էին մինչեւ այն ատեն:

Եւրոպայի դպրոցը, այդ շրջանին, 73 աշակերտներ ունէր:

Մինչեւ 1854 Եւրոպայի դպրոցը իբր տնօրէն ունէր Սերուլլէ Պապիկեանը, զոր տեղացիները կը կոչէին Սէրտար Սէրաֆիմ Պապիկ, եւ որ Մոլտավիոյ բոլոր հայ դպրոցներուն քննիչն էր միեւնոյն ատեն, կարգուած Պոլսոյ Մատթէոս պատրիարքի կոնդակով, որ ցարդ Եւրոպայի եկեղեցին կը գտնուէ: Պապիկեան կրթական շատ բեղմնաւոր գործունէութիւն մը ունեցաւ, հասցնելով բազմաթիւ աշակերտներ, որոնց մէջ նաեւ Սաչերես Գարազաշեանը: Պապիկեան հասցուց նաեւ ուրիշ կրթուած սաներ՝ որոնցմէ՝ ուսումնասէր եկեղեցիներուն հայ-

թայթուեցան հոգեւոր պաշտօնեաներ, տեղեակ երկրին լեզուին եւ պայմաններուն, ու աւելի պիտանի՝ քան եկուոր քահանաները, որոնք երկար տարիներու պէտք կ'ունենային միջավայրը ճանչնալու եւ անոր յարմարելու համար:

Եւրոպայի էր Սաչերես Գարազաշեան, վաճառականի դաւակ, եւ իր հայ ուսումը ստացաւ Պոթօլանի մէջ, ուրիշ Եւրոպայի դասնալով ուսման դպրոց ալ յաճախեց: 1846-1850 օգնական ուսուցչի պաշտօն վարեց Եւրոպայի դպրոցը, որմէ յետոյ հայերէնի, ուսմաներէնի եւ Քրտաներէնի առաջին դասախօս եղաւ մինչեւ 1866: Անիշեւ ետք իր սեփական շէնքին մէջ աւանդին նախակրթարան բացաւ, գիշերօթիկ աշակերտներ ալ ընդունելով, եւ իր ժիր ու անխնայ աշխատանքով այնպիսի համբաւ ստացաւ, որ ուրիշ քաղաքներէ ամենազգի ծնողներ կը գլխիկէին իրենց տղոցը համար: Մեռաւ 1892 Յունիսին, 65 տարեկան: Ծերակուտական եւ մեծանուն իրաւագէտ Գրիգոր Պլյըշլիս, որ աշակերտած էր իրեն, դամբանակառնով մը պանծացուց անոր կրթական գործունէութիւնը: Անոր աշակերտներուն մէջէն շատերը աշխատեցին դէմքեր հանդիսացան ուսման պետութեան մէջ: Կէօրիկ Պուզտակեան՝ ուսման զահուուն այժմու խնամակալը՝ Գարազաշեանի աշակերտներէն է:

Եւրոպայի Հայկազեան կրթարանի ուսուցիչներուն մէջ կը յիշուի յետոյ Լուսիկ Սրմազաշեան, որ իր ուսումը նոյն դպրոցը առնելէ յետոյ 1843-1846 հսկողի պաշտօն վարած է հոն: Ժամատարի պատճառով դպրոցը փակ մնացած է 1848-1850: Վերարացումին՝ դարձեալ կը պաշտօնավարէ հոն՝ Պապիկեանի եւ Սաչերես Գարազաշեանի հետ մինչեւ 1854: Նոյն տարին կը մեռնի Պապիկեան: Գարազաշեանը կը վարեն մընացեալ երկուքը մինչեւ 1866, երբ Գարազաշեան կը քաշուի մասնաւոր դպրոց մը բանալու համար: Սրմազաշեան տասնեակ մը տարի եւս կը վարէ դպրոցը օգնականի մը հետ:

Լուսիկ Սրմազաշեան ծանօթ է նաեւ իբրեւ հեղինակ՝ մանաւանդ հայ կրօնքին պաշտպանութեան համար լոյս ընծայած իր երկերով: Զերմ պաշտպան էր հայ լեզուին, եւ աւանդութիւններուն, եւ իր Պատասխանը